# ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

УНИВЕРСИТЕТ МЕСРОП МАШТОЦ

MESROP MASHTOTS UNIVERSITY

# ԼՐԱՏՈՒ

## ВЕСТНИК · BULLETIN



2011 2(11)

www.mashtots.nk.am

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (1918 - 1920 ԹԹ.)

**ՎԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ**
**պ.գ.դ., ՀՊՃՀ**

*Հայաստանի առաջին հանրապետության և առաջին հերթին գործուն անվտանգության համակարգի ձևավորման և կայացման ճանապարհին ՀՀ կառավարությունը կարևորեց ոչ միայն հետախուզության և հակահետախուզության գործուն համակարգի, այլև արտերկրում ռազմական-զինվորական ներկայացուցչության ցանցի ստեղծումը: Այդ համակարգը հնարավորինս ավարտուն և լիարժեք դարձնելու համար ճշտվում էին հիմնական օղակների գործառույթները, ստեղծվում էին նոր օղակներ: Այս առումով կարևոր քայլ էր արտասահմանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություններին կից զինվորական գործակալների՝ ռազմական կցորդների և առհասարակ զինվորական ներկայացուցչության հաստատության ստեղծումը [1]: Նրանք համագործակցելու էին արտգործնախարարության հետ: Ռազմական կցորդների հաստատության ստեղծման վերաբերյալ Տ. Դևոյանցը գրում է. «Ամէն մէկ պետութիւն պահում է կարեւոր պետութեանց մայրաքաղաքների մէջ դիւանագիտական ներկայացուցիչներ, անոնց կից նաեւ զինուորական ներկայացուցիչներ, որոնց պարտականութիւնն է ուսումնասիրել վերը բերած բոլոր հարցերը զինուորական լրտեսութեան, հիւպատոսների, մնայուն կամ յատուկ գործակալների միջոցով»[2]:*

*Այն, որ ռազմական կցորդները և առհասարակ զինվորական ներկայացուցիչները կարևոր տեղ էին զբաղեցնում հայկական հետախուզության և մասնավորապես արտաքին հետախուզության կազմակերպման համակարգում, և նրանց հատկացվում էր կարևոր դերակատարում հետախուզական աշխատանքների կազմակերպման, Հայաստանի Հանրապետության համար կարևոր տեղեկատվության ձեռքբերման, այդ թվում՝ հարևան պետությունների ռազմաքաղաքական պլանների և նրանց կողմից ձեռնարկվող գործողությունների, թշնամական զինված ուժերի տեղաբաշխման և այլ կարևոր հարցերի վերաբերյալ: Դա ակնհայտորեն երևում է զանազան փաստաթղթերի աշխարհաքաղաքական տարբեր իրողությունների վերլուծություններից, Տ.Դևոյանցի՝ ստորև բերվող հետևյալ խոսքերից. «Զինուորական ներկայացուցիչների պարտականութիւնն է հետեւիլ զինուորական տեխնիկայի, օդանաւորդութեան, զէնքերի, ամրութիւնների, նաւատորմի եւ այլն մտցրած նորութիւնները եւ տեղեկացնել իրենց կառավարութեանց, նրանց կարեւորագոյն պարտականութիւններից մեկն էլ զինուորական լրտեսութիւնը կազմակերպելն է այնպէս, որ պատերազմի մէջ մտնելու պարագային այդ պետութեան հետ, այդ պետութեան ներսը թողնի զինուորական լրտեսների այնպիսի մի ցանց, որ պատերազմական գործողութիւնները սկսելուց յետոյ էլ իր կառավարութեան հասցնէ անհրաժեշտ հետախուզական տեղեկութիւններ»[3]:*

*Անկասկած, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում զինվորական նա-*

*խարարության Գլխավոր շտաբի սպա, անմիջականորեն զինվորական նախարարի ենթակայության տակ գտնվող գեներալ-մայոր Գ. Գ. Ղորղանյանի գործունեությունը ( Գաբրիել Գրիգորի Ղորղանյան ծնվել է 1888 թ. մայիսի 3-ին, մահացել է Փարիզում [4]): Դեռ 1918 թ. դեկտեմբերի 3-ին Ղորղանյանը զինվորական նախարարին է ներկայացնում մի ուշագրավ զեկուցում, որում հիմնավորում է, այսպես կոչված, «զինվորական ագենտների» հաստատության ստեղծման անհրաժեշտությունը: Ղորղանյանը նրանց համարում էր պետության զինված ուժերը գլխավորող մարմնի՝ զինվորական նախարարության գործակալներ: Ղորղանյանը նշում էր, որ ընդհանուր առմամբ ռազմական կցորդը պետք է հետևի այն պետության զինված ուժերի զարգացումներին, ուր ինքը գործուղվել է, և ձեռնամուխ լինի այն հնարավոր ուժերի բացահայտմանը, որոնց հետ հնարավոր են բախումները: Հետևաբար, Գ. Ղորղանյանի կարծիքով, ռազմական կցորդը (գործակալը) պետք է պարզեր՝*

*1) հակառակորդի բանակի կազմը և թվաքանակը խաղաղ ժամանակ,*

*2) պահեստազորի թվաքանակը,*

*3) սպառազինության պաշարները, որոնք կարող են օգտագործված լինել զորահավաքի դեպքում,*

*4) այն մարտիկների հնարավոր առավելագույն թվաքանակը, որոնց տվյալ պետությունը կարող էր զենքի կոչել,*

*5) բանակի կազմակերպվածքը և տեղաբաշխումը պատերազմի դեպքում,*

*6) հրետանային և ինժեներական պահեստների, արհեստանոցների տեղաբաշխումը,*

*7) երկաթուղիների բեռնաթողունակությունը, շարժակազմը,*

*8) երկաթգծերի տեխնիկական վիճակը, երթուղիները,*

*9) պաշտպանական կառույցների պատրաստվածության աստիճանը և տեղաբաշխումը,*

*10) հավատարմագրման երկրի ռազմական կառույցի ղեկավար մարմինների կառուցվածքը և զորահավաքման ժամկետների վերաբերյալ տվյալները,*

*11) զորքերի ուսուցման հարցերը,*

*12) զորքերի մարտական ոգու, կարգապահության վիճակը և այլն[5]:*

*Այս զեկուցագրում մանրակրկիտ կերպով ներկայացնելով ռազմական կցորդ-գործակալների առջև դրված խնդիրները՝ գեներալ-մայոր Ղորղանյանն անում էր կարևոր եզրահանգումներ: Մասնավորապես նա շեշտում էր, որ, առանց զինվորական գործակալների, հետախուզական գործունեության ճիշտ կազմակերպման հավանական ռազմական զինված գործողությունների մասին տվյալները միշտ կասկածելի կլինեն, և հնարավոր չի լինի արդյունավետ հակամիջոցներ ձեռնարկել: Ղորղանյանը, նկատի ունենալով ծավալվող իրադարձությունները, նաև նշում է, որ ներկա պահին անհրաժեշտ է բոլոր ներկայացուցչություններում անհապաղ ստեղծել ռազմական կցորդի հաստատություն, այդ թվում՝ և՛ Վրաստանում, և՛ Ադրբեջանում: Միևնույն ժամանակ նա շեշտում էր, որ զինվորական գործակալները, գործելով դիվանագիտական ներկայացուցչություններին կից, պետք է նշանակվեն զինվորական նախարարի կողմից և ենթակա ու հաշվետու լինեն միայն նրան [6]: Այդ իսկ պատճառով զինվորական գործակալները պետք է ունենան լավ զինվորական պատրաստականություն, և զինվորական նախարարի կողմից նրանց նշանակումը պետք է յուրա-*



*քանչյուր դեպքում հատուկ քննարկվի: Ընդ որում, առանց զինվորական նախարարի թույլտվության, ոչ ոք իրավունք չունի գործուղվելու համապատասխան ներկայացուցչություն: Ղորղանյանը նաև առաջարկում էր զինվորական գործակալներին պաշտոնի նշանակելիս հաշվի առնել նրանց սպայական կոչումը: Միևնույն ժամանակ նա կարևոր էր համարում գաղտնի հետախուզության համար ենթահաշվետվական ավանսի հատկացումը, ինչպես նաև գրասենյակի համար սենյակի տրամադրումը ներկայացուցչությունների զբաղեցրած շենքերում [7]:*

*Ղորղանյանը կատարել էր զգալի աշխատանք՝ ջանք ու եռանդ չխնայելով, որպեսզի ի դեմ ռազմական ներկայացուցչության համակարգի ստեղծման հետախուզության գործը դրվի լավ հիմքերի վրա: Գեներալ Գ. Ղորղանյանը, որին, ըստ էության, կարելի է համարել Փարիզում ՀՀ կառավարության պատվիրակության ռազմական խորհրդատու, այլև, իրավամբ, նաև ռազմական ներկայացուցչի՝ կցորդի պարտականությունները կատարող զինվորական, 1919 թ. վերջերին 1920 թ. սկզբներին սերտ կապերի և համագործակցության մեջ էր գտնվում Կ.Պոլսում գործող Տիգրան Դևոյանցի կողմից գլխավորվող հետախուզական խմբի հետ: Վերջինիս ղեկավարից մշտապես ստանում էր Թուրքիայի, նրա ռազմական ուժերի և ռազմաքաղաքական անցուդարձերի, Մուստաֆա Քեմալի կողմից գլխավորվող թուրքական ծայրահեղ ազգայնական, այսպես կոչված «Միլլի» շարժման, Հայաստանի դեմ նախապատրաստվող ավազակային արշավանքի, հայկական սահմանի ողջ երկայնքով թուրքական զորքերի տեղաշարժերի և այլնի մասին զգալի արժեք ներկայացնող տեղեկատվություն զանազան ամփոփագրերի և նամակագրության տեսքով: Դրանք հասցեագրված էին Փարիզում գտնվող ՀՀ պատվիրակության ռազմական խորհրդատու և ներկայացուցիչ Գ. Ղորղանյանին, և որոնց մեզ հայտնի թիվը հարյուրների է հասնում [8], որոնք վերջինիս /Գ.Ղորղանյան/ կողմից պարտաճանաչորեն առաքվում էին Հայաստան՝ ռազմաքաղաքական ղեկավար շրջաններին՝ ըստ այդմ ակնկալելով համապատասխան արդյունավետ քայլեր: Հարկ է սակայն արձանագրել այն փաստը, որ, այդուհանդերձ, դրանք հարկ եղած արդյունավետությունը չունեցան և ոչ թե հետախուզական բնագավառի կամ վերջինիս հետ սերտորեն առնչվող զինվորական այրերի մեղքով, այլ իշխանությունների որդեգրած կրավորական դիրքորոշման և սևրյան կողմնորոշման, Անտանտյան երկրներին կույր նվիրվածության հետևանքով, երբ շատ հարցերի հանգուցալուծումը պայմանավորվածության մեջ էր գտնվում մեծ տերությունների քաղաքականության հետ՝ փոխանակ փորձելու ձեռնարկել ինքնուրույն քայլեր հանրապետությունը տկար վիճակից դուրս բերելու ուղղությամբ՝ շտկելով վիճակը ինչպես բանակում, այնպես էլ հետախուզության կազմակերպման և ուղղորդման բնագավառում: Դա վկայում է այն արգասաբեր համագործակցության մասին, որ կար Կ.Պոլսի՝ Դևոյանցի գլխավորած հետախուզական խմբի և Տ. Դևոյանցի միջև: Հաջորդ քայլը կատարեց գեներալ-մայոր Արարատյանը, որը 1919 թ. մարտի 31-ին անդրադարձավ Ղորղանյանի զեկուցագրին՝ շեշտելով Թիֆլիսում և Բաքվում զինվորական գործակալների համապատասխան համակարգի ստեղծման անհրաժեշտությունը: Զեկուցագրում ասվում էր, որ հենց այդ զինվորական գործակալներն էլ կարող են ստանձնել նաև Թիֆլիսում ու Բաքվում գտնվող Դաշնակցային հրամանատարության հետ ռազմաքաղաքա-*

կան առնչությունների և փոխհարաբերությունների ապահովման պարտականությունը: Ըստ Արարատյանի՝ այդ պաշտոնյաներին կարելի է վարձատրել զինվորական նախարարության ընդհանուր ծախսերի հաշվին, սակայն գրասենյակի և գաղտնի հանձնարարությունների գծով սպաների ծախսերի համար անհրաժեշտ է լրացուցիչ ֆինանսավորում: Վերջում Արարատյանը խնդրում էր հաստատել իր առաջարկները, թույլ տալ սկսել ֆինանսավորումը ապրիլի 1-ին ( ամսական հազար ռուբլի) և ընդամենը 180 հազար ռուբլի հատկացնել մինչև 1919 թ. հունվարի 1 -ն ընկած ժամանակահատվածի համար [9]:

Թիֆլիսի հայկական դիվանագիտական ներկայացուցչության 1919թ. մարտով թվագրված փաստաթղթերից մեկում շարադրված են զինվորական գործակալների գործունեության ընդհանուր սկզբունքները, հետախուզության օբյեկտները և դիվանագիտական ներկայացուցչության հետ կապերի ձևերն ու եղանակները: Որպես նրանց գործունեության պարտադիր պայման պահանջվում էր նշանակել չորս գործակալ՝ բարձր սպայական կոչումներով, երեքը՝ ցածր սպայական կոչումներով [10]: Նույն փաստաթղթում նշվում էր, որ Թիֆլիսում պահանջվում է Գլխավոր շտաբից բարձր կոչում ունեցող զինվորական, որը պետք է լիներ դիվանագիտական ներկայացուցչության կազմում, և, փաստորեն, անհրաժեշտ ռազմաքաղաքական տվյալները պետք է հավաքվեին ու հաղորդվեին նրա միջոցով: Միակ հնարավոր թեկնածուն գեներալ Գ. Ղորղանյանն էր, որը փայլուն գիտեր ֆրանսերեն, Պարսկաստանում իր գործունեության բերումով գիտեր նաև անգլիացիներին և որոշակի հեղինակություն էր վայելում Անդրկովկասում գտնվող ֆրանսիական, անգլիական ռազմական ներկայացուցչություններում[11]*:

Այս թեկնածության նկատմամբ բարեհաճ էր տրամադրված նաև Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության ղեկավար Լևոն Գեորգիի Եվանգուլյանը ( Լ. Եվանգուլով ), որը դեռ 1919 թ. մարտի 26-ին Հ�հ արտգործնախարարին ուղղված դիմումագրում հարց էր բարձրացնում գեն. Գ. Ղորղանյանին Թիֆլիսում ռազմական կցորդ նշանակելու անհրաժեշտության մասին, ասելով՝ որ նման դիրքորոշման հետ համաձայն է նաև ֆրանսիական ռազմական ներկայացուցիչ գնդապետ Պ. Շարդինյին՝ կառավարությանը խնդրելով վերջինիս օժտել անհրաժեշտ լիազորություններով [12]. նա նաև բառացիորեն խնդրում էր Փարիզում ՀՀ պատվիրակության ղեկավար Ավ. Ահարոնյանից՝ ազդելու կառավարության վրա Գ. Ղորղանյանին Թիֆլիսում զինվորական ներկայացուցիչ նշանակելու համար. «Ձեզ լավ հայտնի է, որ այստեղ մենք չունենք մեկ այլ զինվորական Գլխավոր շտաբ, որը կարողանար անել այն, ինչ նախատեսված է Ղորղանյանի համար: Ես խնդրում եմ դիմել բոլոր միջոցներին, որպեսզի համոզեք կառավարությանը, որ Ղորղանյանի ներկայությունը Թիֆլիսում ավելի շատ է անհրաժեշտ, քան Փարիզում: Առայժմ նա դեռ գտնվում է Կոստանդնուպոլսում, երբ դուրս կգա, հայտնի է: Եթե նա մնա, մենք չենք կարող նրա ուժը օգտագործել ոչ Փարիզում, ոչ Թիֆլիսում»[13]: Լ. Եվանգուլյանը հույս էր հայտնում, որ Ա. Ահարոնյանը արտաքին գործերի նախարարությանը կհամոզի այդ խնդրում, վերջինս էլ իր հերթին կառավարության վրա կազդի, որպեսզի Ղորղանյանը մնա Թիֆլիսում, «Թոմսոնին և Բիչին մոտ» միջավայրում: Նա համառորեն պաշտպանում էր գեներալ Ղորղանյանի թեկնածությունը[14]: Կային նաև այլ թեկնածուներ, այդ թվում՝ դիվանագիտական ներկայացուցչության կազմում գտնվող գնդապետ Շահբաթովը, հետագայում իր հետախուզական աշխատանքով բավական հայտնի դարձած երիտասարդ լեյտենանտ Հովհաննես Խան-Կոտուրսկին: Սակայն Լ. Եվանգուլյանը կտրուկ դեմ էր նրանց նշանակմանը՝ համարելով, որ այդ պաշտոնին պետք է նշանակվեն Գլխավոր շտաբի ավելի բարձրաստիճան զինվորականներ, որոնք ունեն անհամեմատ մեծ փորձառություն և հեղինակություն [15]: Ուստի և այս թեկնածությունները մերժվեցին: Միևնույն ժամանակ ՀՀ արտաքին գործերի նախարարը 1919 թ. ապրիլի 10-ի հեռագրով տեղեկացնում էր, որ գեներալ Ղորղանյանը ևս չի կարող զբաղեցնել այդ պաշտոնը, քանի որ նրան հրամայվել է շտապ մեկնել Փարիզ [16]: Ստեղծված իրավիճակում Լ. Եվանգուլյանը ՀՀ արտաքին գործերի նախարարին ուղղված 1919 թ. ապրիլի 28-ի հեռագրում առաջարկում է գեներալ-մայոր Հովհաննես Հախվերդյանի[17] թեկնածությունը, սակայն զինվորական նախարար Արարատյանը վերջինիս ներկայությունը Թիֆլիսում համարում է աննպատակահարմար, քանի որ նրա կարիքը խիստ զգացվում էր Երևանում[18]:

Այս խնդրում քաղաքական հաշվարկներ և կուսակցական շահարկումներ չկային, Եվանգուլյանը, լինելով բավականին հարգված և կիրք անձնավորություն, թիֆլիսյան բարձր շրջաններում հայտնի անձնավորություն, պարզապես, իր համոզմամբ, ձգտում էր, որ Հայաստանը Թիֆլիսում ունենար բազմափորձ զինվորական գործիչ, որը կկարողանար լավ կողմնորոշվել ռազմաքաղաքական բնույթի իրադարձություններում և բազմաբնույթ զինվորական հարցերում:

Որոշ ժամանակ անց ՀՀ զինվորական նախարարի կողմից Թիֆլիսում ՀՀ ռազմական կցորդի պաշտոնում առաջարկվում է ՀՀ զինվորական դատարանի նախագահ Հովսեփ Արտեմի Քիշմիշյանի (Քիշմիշև) թեկնածությունը, սակայն Լ. Եվանգուլյանը կտրականապես առարկում է՝ պատճառաբանելով, որ նա Գլխավոր շտաբի փորձառու զինվորականներից չէ, գիտակ չէ գործին, ունի միայն իրավաբանական կրթություն, և ըստ իր տրամադրության տակ եղած տեղեկությունների՝ չգիտի մայրենի լեզուն, հայկական ավանդույթները և որ նույնիսկ իրեն հայ չի համարում[19]: Ուստի նա չի կարող նույնիսկ ժամանակավորապես՝ մինչև հարցի վերջնական լուծումը, կատարել Թիֆլիսում ռազմական կցորդի պարտականությունները: Սակայն նման պաշտոնում զինվորականի առկայությունը խիստ հրատապ էր՝ Թիֆլիսում ՀՀ շահերը ներկայացնելու տեսանկյունից, և ՀՀ զինվորական նախարարն ու արտաքին գործերի նախարարը համատեղ որոշակի ճնշում են գործադրում ՀՀ դիվանագիտական հավատարմատարի վրա, որը այդ նշանակումից ոչ շատ անց համոզվում է, որ Քիշմիշյանն ամենևին էլ հայկական ավանդույթներից հեռու մարդ չէր [20]: Ավելին, ինչպես ակնհայտ է դառնում ՀՀ զինվորական նախարար գեներալ-մայոր Արարատյանի 1919 թ. մայիսի 31-ի գրությունից՝ հասցեագրված արտաքին գործերի նախարարին, այդ մասին տեղեկացվում է գեներալ Քիշմիշյանին՝ վերջինս տեղյակ պահելով այն մասին, որ ժամանակավորապես՝ մինչև գործի հետ կապված բոլոր հանգամանքների պարզումը, հետաձգվում է Քիշմիշյանի գործուղումը Թիֆլիս: Իր հերթին գեներալ Քիշմիշյանը՝ որպես պատվախնդիր զինվորական, նույնիսկ զեկուցագիր է ներկայացնում՝ պահանջելով իր հրաժա-

բականը բավարարել՝ միաժամանակ դիմելով համապատասխան խնդրանքով՝ բավարարել իր հայցադիմումը և հարցում անել Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Լ. Եվանգուլյանին: Վերջինից նա պահանջում է տալ ստուգված տեղեկություններ և բացատրություն՝ իր ոչ հայ լինելու, հայկական միջավայրին անծանոթ և անհաղորդ լինելու, և այլևայլ հանգամանքների վերաբերյալ: Եվ ոչ միայն դա, Քիշմիշյանը պահանջում էր համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ իր պատիվը վերականգնելու համար՝ գտնելով, որ ինքը չի կարող ստանձնել ՀՀ զինվորական դատարանի նախագահի՝ իր նախկին պաշտոնից ոչ պակաս կարևոր դիրք Թիֆլիսում[21]: Զինվորական նախարարի և այլ պաշտոնատար անձանց հետագա գրություններից ակնհայտ է դառնում, որ շուտով Եվանգուլյանի մոտ ցրվում են ավելորդ կասկածները և անվստահությունը Քիշմիշյանի նկատմամբ: Այդ մասին տեղեկանում ենք զինվորական նախարարի պարտականությունները ժամանակավորապես կատարող գեներալ-լեյտենանտ Մ. Միլիկյանի՝ արտաքին գործերի նախարարին հասցեագրված 1919 թ. հունիսի 4-ի գրությունից, որում հայտնվում էր այն մասին, որ հունիսի 3-ին Լ. Եվանգուլյանը դիվանագիտական ներկայացուցչություն է հրավիրել Քիշմիշյանին և հայցել վերջինիս ներողամտությունը՝ ափսոսանք արտահայտելով Երևան ուղարկված իր նամակներում արտահայտված մեղադրանքների համար, դրանք համարելով ցավալի թյուրիմացություն, հույս հայտնելով, որ գեն. Քիշմիշյանը շուտափույթ կանցնի իր պարտականությունների կատարմանը և միջադեպը կհամարեի սպառված, քանզի իր կողմից հիշյալ առարկություններ այլևս խնդրում չկան [22]: Քիշմիշյանը անցնում է գործի և առաջին իսկ քայլերից գործնականում ապացուցում, որ ինքը ոչ միայն գործնական և հայրենիքին նվիրված զինվորական է, այլև հայ կյանքին և բարքերին բավականին քաջածանոթ ռազմաքաղաքական գործիչ: Իսկ արդեն Ք.Արարատյանին հասցեագրված 1919 թ. հունիսի 11-ի նամակում Լ.Եվանգուլյանը հայտնում էր, որ ինքն անձնապես Քիշմիշյանի դեմ ոչինչ չունի՝ ավելացնելով, որ գեներալ Հախվերդյանը և գնդապետ Մ.Զինկևիչը իրեն տվել են անհրաժեշտ հավաստիացումներն այն մասին, որ չնայած այն հանգամանքին, որ Քիշմիշյանը իրավաբան է, սակայն կարող է լիարժեք որպես ռազմական կցորդ հանդես գալ[23]: Իսկ արդեն զինվորական գերատեսչության գծով 1919 թ. հունիսի 13-ի հրամանագիրը այդ խնդրում հերթական պարզաբանումն է մտցնում. դրանից ակնհայտ է դառնում Քիշմիշյանի՝ որպես Թիֆլիսում գործող ՀՀ դիվանագիտական հավատարմատարին կից զինվորական ներկայացուցչի՝ ռազմական կցորդի վերջնական նշանակման մասին [24]: Ավելին՝ առաջին իսկ նիստը նա վարեց հայերեն: Իսկ արդեն Հայաստանի արտաքին գործերի նախարարի 1919 թ. հունիսի 15-ի հեռագրից (N 2763)՝ ուղղված Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատարի ժամանակավոր պաշտոնակատար իշխան Մ. Թումանովին (իշխան Միքայել Թումանյան, որը նախորդել է Լ .Եվանգուլյանին դիվանագիտական հավատարմատարի պաշտոնում), ակնհայտ է դառնում, որ Քիշմիշյանի նշանակման հարցը կարելի էր վերջնականապես լուծված համարել, և նրան առաջարկվում էր անցնել իր պարտականությունների կատարմանը՝ մեծ հեղինակություն վայելելով նաև ֆրանսիական, բրիտանական, ամերիկյան և այլ երկրների ռազմական ներկայացուցչությունների շրջանում. 1919 թ. հունիսի 23-ի հեռագրում Լ. Եվանգուլյանը ՀՀ զինվորական նախարարին հայտնում էր, որ



իր կողմից այլևս ոչ մի առարկություն գեներալ Քիշմիշյանի դեմ չկա [25]: Կարճ ժամանակ անց, ինչպես վկայում է հենց գեներալ Քիշմիշյանի գլխավոր ընդդիմախոսը, նա դառնում է հեղինակություն նաև ֆրանսիական, բրիտանական, ամերիկյան և այլ երկրների ռազմական ներկայացուցիչների շրջանում[26]:

Այսպիսով՝ 1919 թ. հունիսի 24-ին Նախարարների խորհրդի կողմից Վրաստանում և Ադրբեջանում դիվանագիտական ներկայացուցչություններին կից ռազմական կցորդների պաշտոնի հաստատումից հետո՝ զինվորական նախարարի 1919 թ. հուլիսի 13-ի հրամանով (N 10) Հայաստանի դիվանագիտական հավատարմատարի և օտար պետությունների (մասնավորապես՝ Անտանտի) ներկայացուցիչների համաձայնությամբ Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությանը կից զինվորական ներկայացուցիչ է նշանակվում Առանձին հայկական կորպուսի դատարանի, ինչպես նաև Հայաստանի զինվորական դատարանի նախկին նախագահ գեներալ-մայոր Հովսեփ Արտեմի Քիշմիշյանը [27]: Զինվորական գերատեսչության 1919թ. հուլիսի 25-ի գրության մեջ արձանագրվում է, որ գեներալ-մայոր Քիշմիշյանից ստացված հուլիսի 18-ի գրությամբ (N 1220) պարզ է դարձել, որ ինքն արդեն անցել է իր նոր պարտականությունների կատարմանը [28]:

Հետախուզական գործի արդյունավետ կազմակերպման տեսանկյունից կարևոր քայլ էր զինվորական ներկայացուցչության համակարգի ստեղծումը Հայաստանի դիվանագիտական կորպուսների կազմում, և այդ ուղղությամբ հերթական քայլը կատարվեց Նախարարների խորհրդի 1919 թ. ապրիլի 8-ի նիստում:

Նախարարների խորհրդի 1919 թ. հուլիսի 8-ի նիստում գործին կից ընդունված հրահանգագրում ներկայացվում են Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության աշխատանքների կազմակերպման (նաև՝ հետախուզական աշխատանքի կազմակերպման), հետևաբար նաև ռազմական կցորդների գործունեության սկզբունքները: Այնտեղ ասվում էր, որ դիվանագիտական ներկայացուցչության համակարգում ամբողջ աշխատանքը ղեկավարում է դիվանագիտական հավատարմատարը, որի հիվանդության կամ բացակայության դեպքում կարող է փոխարինել միայն ներկայացուցչության խորհրդականը[29]:

Արդեն հուլիսի սկզբին Նախարարների խորհրդի հաստատված էր Վրաստանում և Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունների, ինչպես նաև Բաթումի հյուպատոսին կից ռազմական կցորդների, նրանց համհարզների համար սահմանված նախահաշվի օրինագիծը: Եվս մեկ անգամ նշենք, որ 1920 թ. հունվարի 21 - ին ՀՀ վարչապետը Նախարարների խորհրդին ներկայացված իր զեկուցագրում (N 324) անդրադառնում է Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական հավատարմատար Լ. Եվանգուլյանի կողմից հունվարի 10-ին ներկայացված զեկույցին: Մասնավորապես անդրադառնում է այն հարցին որ կապված այն բանի հետ, որ դեռ 1919 թ. նոյեմբերի 27 - ին Հայաստանի խորհրդարանի նիստում քննարկվել է այդ հարցի վերաբերյալ արտաքին գործերի նախարարի կողմից ներկայացված նախագիծը, ըստ որի՝ զինվորական ներկայացուցչի հաստատությունը պետք է ղեկավարեր գնդապետի կամ գեներալ-մայորի կոչում ունեցող անձ՝ 2 սպաների հետ, և նրանց պետք է սպասարկեին 1 գործավար, 5 զինվոր, ինչի համար նախատես-

*ված էր ամսական 15 հազար ռուբլի: Սակայն ՀՀ խորհրդարանի կողմից տվյալ հարցի հետ կապված քաշքշուկ ստեղծվեց. խորհրդարանն առաջարկում էր հետ վերադարձնել ներկայացված օրինագիծը արտաքին գործերի նախարարությանը՝ պահանջելով մշակել նոր նախագիծ: Զեկուցագրում նշվում էր, որ խորհրդարանի զինվորական ներկայացուցչի վարչությունը պետք է լինի ինքնուրույն մարմին, և խորհրդարանը, օգտվելով վարչապետի բացակայությունից, կայացրել է քաղաքական իրադրությանը ոչ համապատասխան, արտաքին գործերի ու զինվորական նախարարությունների շահերին վնասող որոշում: Ուշագրավ է, որ Լ. Եվանգուլյանը, նկարագրելով զինվորական ներկայացուցչության վերակառուցման կամ վերացման հետ կապված քաղաքական իրադրությունը, համոզմունք է հայտնել, որ անհրաժեշտ է պահպանել գործող զինվորական վարչությունը: Վարչապետը ևս, ինչպես և Եվանգուլյանը, կարծում էր, որ պետք է հանձնարարել զինվորական նախարարին ներկայացնել մանրամասն նախահաշիվ և զինվորական ներկայացուցչի այն հաստիքակազմը, ըստ որի՝ զինվորական վարչությունը մինչ այդ գործել է՝ հակադրվելով խորհրդարանի՝ պետության շահերին հակառող, ոչ պրոֆեսիոնալ մոտեցմանը[30]: Այդուհանդերձ, Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական հավատարմատարը 1919 թ. դեկտեմբերի 16 -ին ստացել էր ՀՀ զինվորական նախարարի դեկտեմբերի 11 -ի գրությունը (N 1088)՝ հասցեագրված նաև արտաքին գործերի նախարարին: Համաձայն այդ գրության՝ Հայաստանի խորհրդարանը նոյեմբերի 27 - ի նիստում որոշում է կայացրել առ այն, որ կազմալուծվում է զինվորական ներկայացուցչությունը Վրաստանում, և Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությանը կից որպես ռազմական կցորդ մնում է միայն մեկ սպա, որը կարող էր և գեներալի կոչում չունենալ, ինչպես որոշվել էր նախկինում: Ընդ որում ռազմական կցորդը պետք է աշխատեր դիվանագիտական համակարգում՝ վերջինիս ղեկավարի անմիջական վերահսկողությամբ: Քիշմիշյանին առաջարկվում էր նոր նշանակման կապակցությամբ անմիջապես դիմել զինվորական նախարարին այն բանից հետո, երբ 1920թ. հունվարի 1-ից Թիֆլիսում գտնվող ՀՀ զինվորական վարչությունը դադարեցներ իր գործունեությունը և լուծարվեր [31]: Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատարը ՀՀ արտաքին գործերի նախարարին ուղղված 1920 թ. հունվարի 10-ի զեկուցագրում (N 143) կտրուկ առարկում է այդ ամենին՝ պատճառաբանելով, որ դա հակասում է հենց Ղորղանյանի կողմից մշակված նախագծի դրույթներին, որ զինվորական վարչության կազմալուծումը թուլացնում է իրենց դիրքերը: Հարկ է նշել, որ ի դեմ գեներալ Կարալովի՝ Վրաստանը շարունակում էր պահպանել նմանատիպ վարչությունը Երևանում: Բացի այդ, զինվորական վարչությանը հատկացվող գումարներն այնքան քիչ էին, որ այդ առումով ՀՀ կառավարությունը բոլորովին կարող էր չանհանգստանալ՝ այն ավելորդ շքեղություն համարելով իր համար[32]: Սակայն դիվանագիտական հավատարմատարի առարկությունները ոչ մի աջակցություն չեն գտնում, և Թիֆլիսում դիվանագիտական ներկայացուցչությանը կից զինվորական վարչությունը վերջնականապես լուծարվում է՝ դադարեցնելով իր օգտաշատ գործունեությունը: Դա, իհարկե, բացասական հետևանքներ ունեցավ հետախուզական գործի կազմակերպման տեսանկյունից: Կրճատվեցին ինչպես ֆինանսական հատկացումները, այնպես էլ կադրային թվակազմը, ինչն էլ հանգեցրեց իրականացվող գործողությունների արդյունավետության նվազմանը: Անշուշտ, չի կարելի ամեն ինչ բացատրել սոսկ ֆինանսական միջոցների բացակայությամբ, կամ իշխանությունների չկամությամբ, կամ բյուրոկրատական կեցվածքով՝ պահպանելու անհրաժեշտ կառույցները Թիֆլիսում: Այդ համակարգի քարուքանդ լինելու հանգամանքները, ըստ երևույթին, պետք է որոնել այն աշխարհաքաղաքական գործոնների և ռազմական իրավիճակի մեջ, որում հայտնվեց Հայաստանի Հանրապետությունը 1920 թ. վերջնամասում, երբ մեկը մյուսի ետևից սկսեցին կազմալուծվել ՀՀ պետական կառույցները, և անգամ գեներալ Քիշմիշյանին ենթակա սպա հետախույզները պատրաստակամություն հայտնեցին մեկնելու գործող ռազմաճակատ՝ թուրք-հայկական պատերազմի դժվարին և ծանր պահերին փորձելով զորավիգ լինել հայրենքին: Դա, առհասարակ, ընդունված չէր ցանկացած երկրի պրակտիկայում. վերջիններիս գործունեությունը ուղղորդված է խիստ նպատակային խնդիրների վճռմանը, այն է՝ հետախուզական բնույթի հարցերի իրականացմանը: Թիֆլիսում և այլուր արդյունավետորեն գործող զինվորական ներկայացուցչության առկայությունը և հետագա պահպանումը աննպատակահարմար էր. Հայաստանի Հանրապետության հնարավորությունները չներեցին թե՛ արտաքին և թե՛ ներքին բազմաթիվ գործոնների հետևանքով, այդ թվում՝ և՛ կազմակերպական կադրային, և՛ ֆինանսատնտեսական բնույթի, և գլխավորապես աշխարհաքաղաքական բարդագույն գործոնների ազդեցության հետևանքով:*

*Վերը բերված փաստերն ակնհայտորեն վկայում են, որ Հայաստանի առաջին հանրապետության զինվորական կառույցներն ամբողջությամբ, ինչպես նաև զինվորական հետախուզությունը և հակահետախուզությունը ստեղծվել են՝ անցնելով կազմակերպական-քաղաքական բարդ ուղի: ՀՀ կառավարության կողմից արտասահմանում ռազմական ներկայացուցչության հաստատության ձևավորմանն ուղղված քայլերը (այդ թվում՝ ռազմական կցորդների և տարբեր զինվորական ներկայացուցիչների հաստատության ստեղծումը) նպատակաուղղված էին պետական անվտանգության համակարգի կայացմանը, ինչը կապահովեր վերջինիս արդյունավետ գործունեությունը:*

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ռազմական կցորդը (ատաշե) դիվանագիտական աշխատող պաշտոն կամ աստիճան է. դիվանագիտական ներկայացուցիչներին կից գործում են ռազմական, ռազմածովային, ռազմաօդային կցորդներ (ներկայումս՝ արևմտյան ստանդարտներով, կարող է լինել պաշտպանության հարցերով կցորդ, որը մեկ պաշտոնում միավորում է այդ երեք պաշտոնների գործառույթները): Ռազմական կցորդների և նրանց աշխատողների գործունեությունը համապատասխան երկրում կարգավորվում է միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով և նորմերով: Տե՛ս "Военный энциклопедический словарь", М.,1986, стр. 54:
2. S. Դէոյեանց, Զինուորական հետախուզութիւն եւ հակահետախուզութիւն, «Հայրենիք» (Բոստոն), 1943, N. 3 ( 236 ), էջ 91:
3. Նույն տեղում:
4. Առաջին հանրապետության հռչակման պահից սկսած Գ.Ղորղանյանը ներգրավվել է դիվանագիտական աշխատանքների մեջ որպես ռազմական խորհր-

դատու: Նա 1918 թ. մայիսի վերջին հունիսի սկզբին մասնակցել է Բաթումի կոնֆերանսի աշխատանքներին: 1918 թ. հունիսին Ա. Ահարոնյանի, Մ. Պապաջանյանի, Ա.Խատիսյանի հետ միասին ուղարկվել Կ.Պոլիս, ուր սպասվում էր կոնֆերանսի անցկացում Կովկասյան հարցի վերաբերյալ: Դրանից հետո ՀՀ կառավարության կողմից Գ. Ղորղանյանը ուղարկվել է Փարիզ որպես հայկական պատվիրակության խորհրդական՝ մասնավորապես զինվորական հարցերի գծով, ուր նա ժամանում է 1919 թ. հունիսի 1-ին, և նրա կողմից ղեկավարվող պատգամավորության ռազմական սեկցիայի մեջ էր մտնում գեներալ Հակոբ Բագրատունին, որը 1919 թ. նոյեմբերի 20-ից մինչև 1920 թ. հուլիսը եղել է ՀՀ միացյալ ռազմական միսիայի ղեկավարը ԱՄՆ-ում, որից հետո նոյեմբերի վերջերին ՀՀ կառավարության կողմից նշանակվել է դեսպան Անգլիայում: 1934 թ. Փարիզում հրատարակվող «ՎէՄ» ամսագրում (1934, մայիս-հունիս, հուլիս-օգոստոս) տպագրվել է Ղորղանեանի հոդվածաշարը Հայաստանի Հանրապետության և մեծ տերությունների հարաբերությունների մասին: Տե՛ս Ղորղանեան Գ. Զօր., Հայաստանի Հանրապետութիւնը եւ պետութիւնները, I. Բրեստ Լիտովսկից մինչեւ Սեւր, Բ. տարի, 1934, թ. 3, մայիս - յունիս, Ե., էջ 29 - 41; II, Սեւրից Լոզան, Բ. տարի, 1934, թ. 4, յուլիս - օգոստոս, էջ 54 - 72: Տե՛ս նաև Հ. Ավետիսյան, Գեներալ Հակոբ Բագրատունի, Պատմաբանասիրական հանդես, 1997, N 1, էջ 41, 53, 56: (ռուս. լեզվով): թ. А. Аветисян, Генерал Гавриил Григорьевич Корганян, Լրաբեր Հասարակական Գիտությունների. 1997. N 1, էջ 155 -176: Հ. թ. Ованнисян, Международные отношения Республики Армения, 1918 - 1920 гг., Ер., "Тигран Мец", 2007, стр. 282 - 286, 640 - 642, և այլն:

5. Տե՛ս Հայաստանի Ազգային Արխիվ ( այնուհետև՝ ՀԱԱ ), Ֆ. Պ - 199, g. 1, գ. 27 ( 72 ), թ. 143 - 145:
6. Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 199, g. 1, գ. 27, թ. 27 ( 72 ), թ. 62, Ֆ. Պ - 278, g. 1, գ. 11, թ. 16:
7. Տե՛ս նույն տեղում, թ. 143:
8. Տե՛ս Հայաստանի Հանրապետության Արխիվ (Բոստոն), թիվ 17 / 17, պահ. 12, դ. 3: թիվ 9 / 9, պահ. 12, դ. 3:
9. Տե՛ս նույն տեղում, թ. 142:
10. Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 276, g. 1, գ. 114, թթ. 10 -12:
11. Գ. Ղորղանյանը Պարսկաստանում եղել էր գեներալ Ն. Ն. Բարաթովի ռազմարշավային (էքսպեդիցիոն) կորպուսի շտաբի կազմում, այնուհետև նշանակվել էր Կովկասյան հեծելազորային դիվիզիայի հրամանատար, ապա ընդգրկվել էր ՀՀ Զինվորական խորհրդի կազմում, հրաշալի գիտեր ֆրանսերեն:
12. Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 200, g. 1, գ. 300, թթ. 1 - 1 հակ.:
13. Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 200, g. 1, գ. 181 / 1, թ. 46 - 47:
14. Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ - 199, g. 1, գ. 118, թթ. 13, 58 - 59: Ֆ. Պ - ֆ. 121, g. 1, գ. 111, թ. 1, գ. 9, թ. 15,
R. G. Hovannissian, The Republic of Armenia. Vol. II, From Versailles to London, 1919 - 1920. Berkeley, Los Angeles, London, 1982, p. 349:
15. Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 200, g. 1, գ. 300, թթ. 1 - 2:
16. Տե՛ս նույն տեղում, թթ. 8 - 10:
17. 1919 թ. մարտի 27 - ին ՀՀ զինվորական նախարարի պաշտոնից պաշտոնաթող լինելուց հետո Հ. Հախվերդյանը նշանակվել է զինվորական նախարարության կից Ռազմական խորհրդի անդամ, իսկ նույն թվականի ապրիլի 25-ին զինվորական նախարար Ք. Արարատյանի հրամանով՝ նաև ՀՀ զորքերի գլխավոր հրամանատարի (սպարապետի) շտաբի պետ, ՀՀ կա-ռավարության 1919 թ. մայիսի 28-ի որոշմամբ նրան շնորհվել է գեներալ-լեյտենանտի զինվորական կոչում: Տե՛ս М. Карапетян. Генерал-лей-тенант Ованес Ахвердян. Ер., "Наапет", 2003, сс. 10 - 11, Տե՛ս նաև «ՈՒրբաթ», 1990 Г.):
18. Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 200, g. 1, գ. 300, թթ. 11 - 13:
19. Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 200, g. 1, գ. 300, թթ. 18 - 19, Ֆ. Պ - 276, g. 1, գ.116, թթ. 69 - 71:
20. Տե՛ս նույն տեղում, թթ. 23 - 25, Ֆ. Պ - 276, g. 1, գ. 116, թթ. 70 - 71:
21. Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 200, g. 1, գ. 300, թթ. 22:
22. Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 200, g. 1, գ. 300, թթ. 29 - 30, 32 - 34, 40:
23. Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 276, g .1 , գ. 116, թ. 70:
24. Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ - 204, g. 1 , գ. 131, թ. 113:
25. Նույն տեղում, Ֆ. Պ - 200, g. 1, գ. 300, թ. 23 - 25, 32 - 34: Նույն տեղում, Ֆ. Պ - 204, g. 1, գ. 40, թ. 71, գ.132, թ. 104: Ֆ. Պ - 276, g. 1, գ. 75, թ. 26, գ. 26, թ. 203, գ.187, թ. 121:
26. Տե՛ս նույն տեղում, Ֆ. Պ - 200, g. 1, գ. 300, թթ. 23 - 25, 32 - 34:
27. Տե՛ս նույն տեղում, Ֆ. Պ - 204, g. 1, գ. 40, թ. 71, գ. 132, թ. 104, Ֆ. Պ - 276, g. 1, գ. 75, թ. 26, գ. 26, թ. 203, գ. 187, թ. 121:
28. Նույն տեղում, Ֆ. Պ - 204, g. 1, գ. 132, թ. 104:
29. Տե՛ս նույն տեղում, թ. 254:
30. Տե՛ս նույն տեղում, Ֆ. Պ - 199, g. 1, գ. 118 (146 ), թթ. 58 - 59:
31. Տե՛ս նույն տեղում, Ֆ. Պ - 276, g. 1, գ. 196, թ. 98, Ֆ. Պ - 200, g. 1, գ. 300, թ. 42:
32. Տե՛ս նույն տեղում, Ֆ. Պ - 200, g. 1, գ. 300, թ. 45:



## РЕЗЮМЕ

**Вокруг истории организации деятельности военных представителей Первой Республики Армения за границей (1918 - 1920 гг.)**

**Ваник Вирабян**

В период формирования дипломатических и военных составляющих разведывательной и контрразведывательной служб в Первой Республике Армения жизненно важную роль для обеспечения внешней безопасности новосозданного государства играла структура военных организаций и, в частности, военных атташе при дипломатических представительствах РА. Автор рассматривает некоторые детали этого процесса, отслеживает историю создания и развития соответствующих структур на основе новых архивных материалов, в прошлом малоизвестных, а иногда и недоступных нашему читателю. Несмотря на все сложности, характерные для этого вре-мени, создавалась военная структура, его составляющие компоненты, а также разведывательная и контрразведывательная службы Первой Республики. Пройдя сложный организационно-политический путь, военная спецслужба и иные военные формирования превратились в эффективные органы,

преследующие цель по обеспечению внешней безопасности новоиспеченного, во многом еще слабого государства. Деятельность военных организаций была направлена на становление системы обеспечения внешней безопасности и ее интенсивное развитие. К сожалению, в связи с отсутствием средств, руководство республики в начале 1920 года приняло решение упразднить данную систему, этим недальновидным шагом подорвав те основы, на которые могло опереться государство в последующих бурных событиях.


## SUMMARY

**Round the History of the Work-Organization of Military Representatives of the First Republic of Armenia Abroad (1918 - 1920)**

**Vanik Virabyan**

During the development of diplomatic and military intelligence and counter intelligence service in the First Republic of Armenia institutions of military sub-units, particularly military attaches of diplomatic representatives of RA had vitally important role in the safeguard of the outer defense in the newly created government.

The author refers to some components of that process introducing the history of the development and formation of corresponding institutions on the basis of new-found archival materials, which were less known in the past and most of them were even completely secret for the reader.

The military unit, sub-units, as well as the intelligence and counter intelligence services kept their existence in spite of all the difficulties characteristic of that time. On their way of experiencing difficult organizational-political development, special military services and other military sub-units changed into efficient bodies for the outer defense of the newly made and weak government.

The activities of military organization were for the formation of security system in its outer defense and were directed to its intensive development.

Unfortunately, in the beginning of 1920 the government of the republic decided to liquidate that system, because of the absence of urgent means. With this improvidences it ruined the base on which the government could rely on during the further rapid development of events.




## ՊԱՏՄԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ. ԵԳԻՊՏՈՍԻ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ


**ՔՈՉԱՐ ՆՎԱՐԴ**

**ԵՊՀ, արևելագիտության ֆակուլտետի թրքագիտության ամբիոն, պ.գ.թ., դոցենտ**

**ՋԻԼԱՎՅԱՆ ՀՐԱՉՈՒՀԻ**

**ԵՊՀ, արևելագիտության ֆակուլտետ արաբագիտության ամբիոնի հայցորդ**


*Հնագույն Եգիպտոսի նախադինաստիական ժամանակաշրջանը հնագետները ստորաբաժանել են վաղ և ուշ շրջանների: 1-ին շրջանն ընդգրկում է մ.թ.ա. 3800-3600 թթ. և 2-ը՝ 3600-3200 թթ.: Երկրորդ փուլի վերջում՝ մոտավորապես մեզանից 5200 տարիներ առաջ (մ.թ.ա. 3200 թ.) վերին Եգիպտոսն ու Ներքին Եգիպտոսը միացան Նարմեր կամ Մենես փարավոնի իշխանության ներքո:*

*Այս ժամանակաշրջանն ուրույն աֆրիկական ծագում և առանձնահատկություններ ունի, որը մի շարք դեպքերում միաձուլված է եղել ոչ աֆրիկական որոշ տարրերի հետ: Ըստ որոշ մասնագետների տեսակետների՝ առաջին դինաստիան հիմնադրող դինաստիկ ռասայի գոյությունը դեռ փաստացի ապացույցների կարիք ունի: [1]*

*Այդ տարածքի ժամանակակից բնակչության ֆիզիկական տիպի վերջին ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դինաստիական ժամանակաշրջանի ողջ ընթացքում մարդաբանական հատկանիշները չնչին փոփոխություններ են վերապրել: Նմանատիպ ենթադրություններ են արվել լեզվաբանության բնագավառում լեզվագետ Գրինբերգի կողմից: Նա համարում է, որ Հին Եգիպտոսի լեզուն առաջացել է ոչ թե սեմական լեզուներից, այլ այդ լեզուների հետ ընդհանուր նախնի է ունեցել: Միասին դրանք աֆրիկական լեզվաընտանիքի հինգ հավասարազոր ճյուղերից երկուսն են կազմում՝ քուշիթական, բերբերական և չադական լեզուների շարքում: [2]*

*Նեղոսի դելտայում Եգիպտոս պետությունն իր անվանումն ստացել է հույներից: Այս բառի բազմաթիվ նշանակություններից ամենատարածվածը կապված է հին քաղաք Մենեսի՝ Հետկապտի (աստվածային Պտախի սրբավայրի), հետ: Եգիպտացիներն իրենք իրենց երկիրն անվանել են Կեմետ (դպտիերեն՝ «հեմի» թարգմանաբար նշանակում է սևահող՝ ի հակադրություն «դեշերետ»-ի՝ կարմիր հող, անապատ):*

*Հին եգիպտական երկրի վերածնունդը Նեղոսի դելտայում տեղի է ունեցել մ.թ.ա. IV-III հազարամյակների սահմանագծում աշխարհագրական բաժանման հետևանքով, որով այն 2 մասերի բաժանվեց՝ դելտայի կամ Ստորին Եգիպտոսի և հովտի, որն էլ կոչվեց Վերին Եգիպտոս: Երկրի 3000 տարիների պատմության ընթացքում այս շրջանները կամ միանում էին կամ բաժանվում միմյանցից:*

*Այն մասին, թե ինչպես է կազմավորվել հին ամենահզոր քաղաքակրթություններից մեկը, մեզ հայտնի է ոչ միայն հնագիտական աղբյուրներից: Մեզ են հասել նաև հին եգիպտական ժամանակագրություններ և անտիկ գրողների աշ-*